«ԼԻՑՔ 100-200»
ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավի իրականացման նկարագիր

1.1. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավը կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գովազդային քաղաքականության շրջանակներում՝ Ընկերության տերմինալներով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով:

1.2. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավի (այսուհետ՝ նաև Արշավ) կանոնները սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

1.3. Կանոնների 2.1 կետում նախատեսված գործողությունները կատարելը համարվում է օֆերտայի լիարժեք և անվերապահ ընդունում (ակցեպտ):

1.4. Արշավի գործողության ժամկետն է 01.06.2021թ. մինչև 01.08.2021թ. (ներառյալ): Օֆերտայի գործողության ժամկետը համընկնում է Արշավի անցկացման ժամկետին: Կանոնները կարգավորվում և մեկնաբանվում են, ինչպես նաև Կանոններից բխող բոլոր հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

2. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավի անցկացման և արշավին մասնակցության կարգը

2.1. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավի շրջանակներում նվեր կարող է ստանալ այն անձը (այսուհետ՝ Մասնակից), ով միաժամանակ կատարել է հետևյալ պայմանները.
1) Ընկերության տերմինալի միջոցով բջջային հեռախոսահամարի հաշիվը համալրելիս (լիցքավորելիս) ընտրել է մետաղադրամով վճարելու եղանակը, և
2) 1-ին ենթակետում նախատեսված գործողությունը կատարելուց հետո համապատասխան կոճակը սեղմելով՝ անցել է (չի դիտել) տերմինալի էկրանին հայտնված գովազդային հոլովակը:

2.2. Կանոնների 2.1. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո Մասնակիցը կարող է ստանալ նվեր՝
1) 100 կամ 200 ՀՀ դրամի չափով համալրում (լիցաքվորում) այն բջջային հեռախոսահամարի հաշվին, որին տերմինալի միջոցով կատարել է վճարում՝ 2.1. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո, կամ
2) բջջային հեռախոս iPhone 12:

2.3. Կանոնների 2.1 կետով նախատեսված գործողությունները կատարելն անմիջականորեն չի առաջացնում 2.2 կետում նախատեսված նվերներից որևէ մեկը

ստանալու իրավունք, այլ առաջացնում է նվեր ստանալու հնարավորություն: Որոշակի ալգորիթմով աշխատող ծրագիրն է պատահականության սկզբունքով որոշում.
ա) նվեր ստանալու հնարավորություն ստացած Մասնակիցը ձեռք է բերում նվեր ստանալու իրավունք, թե ոչ,
բ) նվեր ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում՝ նվերի տեսակը:

2.4. Ակցիայի շրջանակներում հաղթող է համարվում այն բջջային հեռախոսահամարի բաժանորդը, որի հաշվին կատարվել է վճարումը (լիցքավորումը) 2.1. կետով նախատեսված գործողությունները կատարելուց հետո, և որը 2.3 կետով սահմանված կարգով ընտրել է ծրագիրը:

2.5. Մասնակիցը, ով Կանոնների 2.3 կետով նախատեսված եղանակով ձեռք է բերել նվեր ստանալու իրավունք, այդ մասին համապատասխան ծանուցում է ստանում անմիջապես՝ տերմինալի էկրանին հաղորդագրությամբ: Կանոնների 2.2 կետի 2-րդ ենթակետում նշված նվերի վերաբերյալ տեղեկացնել Ընկերությունը կարող է նաև հաղթող Մասնակցի հեռախոսահամարին զանգահարելով և (կամ) կարճ հաղորդագրություն ուղարկելով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հեռախոսահամարին զանգը և (կամ) կարճ հաղորդագրությունը չհասնելու արդյունքում Մասնակցի նվերը չստանալու համար:

2.6. Ընկերությունը Կանոնների 2.2 կետի 1-ին ենթակետում նշված նվերը փոխանցում է, այն է՝ բջջային հեռախոսահամարի հաշիվը համապատասխան գումարի չափով համալրում (լիցքավորում) է անմիջապես, իսկ Կանոնների 2.2 կետի 2-րդ ենթակետում նշված նվերը ստանալու համար Մասնակիցը պարտավոր է անձամբ ներկայանալ Ընկերության գլխամասային գրասենյակ՝ նվերի վերաբերյալ ծանուցումը որևէ եղանակով ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում, անձը հաստատող վավեր փաստաթուղթ և Կանոնների 2.2 կետի 1-ին ենթակետում նշված հեռախոսահամարը Մասնակցին պատկանելը հավաստող փաստաթուղթ ներկայացնելով: Ընդ որում, նվերը ստանալու իրավունք ստացած Մասնակցի՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում չներկայանալու դեպքում Ընկերությունը կարող է չտրամադրել նվերը: Չտրամադրված նվերները մնում են Ընկերության հայեցողության ներքո:

2.7. Կանոնների 2.2 կետի 2-րդ ենթակետում նշված նվերի գույնը, ձևը, տեսքը, որակը կարող են տարբերվել (չհամընկնել) գովազդային հարթակներում ներկայացվող նվերից, ինչպես նաև հաղթողների ակնկալիքներից: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հայտարարված և փաստացի տրամադրված նվերի անհամապատասխանությունների համար:

3. Այլ պայմաններ

3.1. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ իրականացնել սույն Կանոնների ցանկացած պայմանի ցանկացած փոփոխություն, որի մասին կարող է տեղեկացնել էլեկտրոնային որևէ հարթակով:

3.2. «ԼԻՑՔ 100-200» գովազդային արշավի Մասնակիցը սույնով տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի մարքեթինգային և օրինական այլ նպատակներով օգտագործել Մասնակցի կամ այլ անձանց տվյալները, որոնք Մասնակիցը տրամադրել (մուտքագրել) է: Մասնակիցը հավաստում և երաշխավորում է, որ իր մուտքագրած տվյալները ինքը և երրորդ անձինք տրամադրել են իրենց կամքով, և երրորդ անձինք ծանոթացել են սույն Կանոնների պայմաններին: Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին տեսա-ձայնա-լուսանկարահանել և արդյունքը հավաքագրել, պահպանել ու տարածել գովազդային և օրինական այլ նպատակներով:

3.3. Ընկերությունն իրավունք ունի Մասնակցին և նրա մուտքագրած տեղեկատվությամբ ներկայացված այլ անձանց ուղարկել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ: Սույնով Մասնակիցը տալիս է նմանատիպ հաղորդագրություններ ստանալու համաձայնություն, ինչպես նաև երաշխավորում է, որ այն անձինք, որոնց մասին տեղեկատվությունն ինքը մուտքագրել (տրամադրել) է, նույնպես տվել են հաղորդագրությունները ստանալու համաձայնություն:

3.4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել թե՛ Մասնակցի, թե՛ նրա նշած այլ անձանց տվյալների ստուգում՝ Ընկերության չափանիշներով: Բացի այդ, Ընկերությունն իրավունք ունի Մասնակցից պահանջել ներկայացնել անձը հաստատող, ինչպես նաև Մասնակցին նույնականացնող անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ: Նույնականացնող փաստաթղթերի և տվյալների տեսակներն ու ներկայացման ձևերը սահմանում է Ընկերությունը:

3.5. Սույնով Մասնակիցը համաձայնում է, որ տերմինալի միջոցով լիցքավորված հեռախոսահամարը սխալ, գոյություն չունեցող, չաշխատող, այլ անձի կամ խնդրահարույց այլ հետևանքներ առաջացնող լինելու դեպքում Ընկերությունը պատասխանատու չէ անբարենպաստ որևէ հետևանքի, այդ թվում նաև նվերը չտրամադրելու կամ այլ անձի տրամադրելու համար:

3.6. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն տեղեկատվության համար, որը Մասնակիցը մուտքագրում է, ինչպես նաև այն գործողությունների համար, որոնք իրականացվում են այդ տեղեկատվության հիման վրա: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան համակարգերի, ինչպես նաև օգտագործվող կայքի, սոցիալական ցանցերի աշխատունակության համար և չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը:

4. Ընկերության վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան 0033, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-22